ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԲԱԶՈՒՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք,
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ԳՅՈՒՂ ԲԱԶՈՒՄ 1 ՓՈՂՈՑ ԹԻՎ 2, Հեռ. (0322)
64109 , bazum.lori@mta.gov.am

N 016/384
20 նոյեմբեր 2019թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Կից ներկայացնում ենք Բազում համայնքի ղեկավարի թիվ 79-Ա և 80-Ա որոշումները:

Առդիր՝ 2 էջ

Недействительная подпись

X

Սրբուհի Հարությունյան
Համայնքի ղեկավար

ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Բազում, (0322) 64109, bazum.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019թվականի N 79-Ա

06-023-0004-0009 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով քաղաքացի Զալիկո Մեսրոբի Մարգարյանի, Ալվարդ Սարգսի Օհանյանի, Մեսրոպ Զալիկոյի Մարգարյանի դիմումը, հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 02.05.1991 թ-ի թիվ 2 որոշումը, չափագրումների ժամանակ տեղի ունեցած սխալը՝ ըստ որի Հովհաննես Անտոնյանի տնամերձ հողամասը և բնակելի տունը սխալմամբ չափագրվել է Զալիկո Մարգարյանի հողամասի հետ համատեղ, <<ԻՆԵՔՍ>> ՍՊԸ-ի կողմից հաստատված հատակագծերը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, ՀՀ <<Քաղաքացիական օրենսգրքի>> 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ մասով, իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, ՀՀ ՀՕ 60-րդ և 64-րդ հոդվածներով, ինքնակամ կառուցված շենքերի, ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին ՀՀ ՀՕ 510-Ն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետով, ՀՀ կառավարության 2005 թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, <<Նորմատիվ Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37 հոդվածի 1-ին մասով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել 06-023-0004-0009 ծածկագրի տակ գտնվող 0,13984 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման և սպասարկման հողամասի և հողամասում գտնվող այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներ իրականացրած և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող 1990 թ-ին կառուցված 111,95 քմ մակերեսով բնակելի տան, 1990 թ-ին կառուցված 40,92 քմ մակերեսով բաց պատշգամբի, 19,57 քմ մակերեսով ծածկարանի նկատմամբ Զալիկո Մեսրոբի Մարգարյանի /ծնված 1950 թ/, Ալվարդ Սարգսի Օհանյանի /ծնված 1956 թ/, Մեսրոպ Զալիկոյի Մարգարյանի /ծնված 1978 թ/,սեփականության իրավունքը:

2.Անշարժ գույքը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:

3.Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասն անհատույց սեփականության իրավունքով հատկացնել և հողամասի նկատմամբ օրենքի ուժով ճանաչել Զալիկո Մեսրոբի Մարգարյանի /ծնված 1950 թ/, Ալվարդ Սարգսի Օհանյանի /ծնված 1956 թ/, Մեսրոպ Զալիկոյի Մարգարյանի /ծնված 1978 թ/ սեփականության իրավունքը:

4. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

5. Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝ գյուղ Բազում, 2 փողոց թիվ 43/1 փոստային հասցեն:

6. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Լոռիի մարզային ստորաբաժանումում:

7. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2019 թվականի նոյեմբերի 1-ի <<06-023-0004-0009 ծածկագրի տակ գտնվող բնակելի տան, օժանդակ կառույցների և հողամասի նկատմամբ իրավունքները վերականգնելու մասին>> թիվ 72-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Բազում, (0322) 64109, bazum.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019թվականի N 80-Ա

06-023-0235-0008 ԾԱԾԿԱԳՐԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հոդվածներով, Պետական սեփականություն հանդիսացող հողերից Բազում համայնքին անհատույց սեփականության իրավունքով փոխանցված հողերի ՀՀ կառավարության 08/04/2004թ. թիվ 458-Ն որոշումով, ՀՀ Հողային օրենսգրքի 3-րդ, 57-րդ 60-րդ հոդվածներով և 59-րդ հոդվածի 3-րդ կետով, ՏԻՄ-ի մասին ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ կառավարության պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին 12/04/2001թ. 286 որոշումով, <<Նորմատիվ Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37 հոդվածի 1-ին մասով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1.Բազում համայնքում գտնվող և համաձայն ՀՀ Կառավարության 08.04.2004թ-ի թիվ 458-Ն որոշմամբ համայնքին անհատույց սեփականության իրավունքով փոխանցված 06-023-0235-0008 ծածկագրի տակ գտնվող 0,14175 հա վարելահողի նկատմամբ ճանաչել Բազում համայնքի սեփականության իրավունքը:

2. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3. Անշարժ գույքը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:

4.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռիի տարածքային ստորաբաժանումում:

5. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավրի 2019 թվականի հոկտեմբերի 16-ի <<Ինքնակամ կառուցված անասնաշենքի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ Բազում համայնքի սեփականության իրավունքի ճանաչելու մասին>> թիվ 69-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ